

ԼՈՒՍԻՆԵ ՍԱՅԱԿՅԱՆ

ՌՈՔԵՐՏ ԱԹԱՅԱՆԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ
ԿՈՄԻՏԱՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1949 թվականի սեպտեմբերի 26-ի նախարարների խորհրդի որոշմամբ¹ (կոմպոզիտորի ծննդյան 80-ամյակի առիթով) Հայաստանի Գիտությունների Ազգային Սկադեմիայի Արվեստի ինստիտուտին հանձնարարվեց Կոմիտասի երկերի համահավաք հրատարակությունը:

Կոմիտասի երաժշտական ժառանգության ակադեմիական հրատարակության խմբագիր Նշանակվեց տաղանդավոր, բազմավաստակ երաժշտագետ, կոմպոզիտոր Ռոբերտ Աթայանը:

Մինչև կոմիտասյան ժառանգության ակադեմիական հրատարակության խմբագիր դառնալը, Ռոբերտ Աթայանը պատկառազույց ներդրում ուներ կոմիտասագիտության մեջ: Իր բազմաթիվ հոդվածներում երաժշտագետը հետազոտել և արժեքավորել է կոմիտասյան ժառանգության պատմության և տեսության մի շարք հարցեր:

Իսկական գիտնականի խորությամբ և պատասխանատվության գերազույն զգացումով Ռ. Աթայանը ձեռնամուխ եղավ Կոմիտասի ժառանգության խմբագրական աշխատանքին, որը հանդիսացավ Կոմիտասին նվիրված նրա աշխատանքների հանրագումարը:

Երկերի ժողովածուներում Աթայանը վերլուծական մեծ հմտությամբ վեր հանեց կոմիտասյան ժողովրդական երգերի գրառումների և մշակումների գիտական ու գեղարվեստական արժանիքները, ճշգրտեց և ընդլայնեց Կոմիտասի ժառանգության ժանրային-թեմատիկ, բովանդակային-կերպարային շրջանակները:

Ինչպես վերը նշվել է մինչև ակադեմիական հրատարակությունը Կոմիտասի ժառանգության փոքր մասն էր հայտնի: Կոմիտասի կյանքի օրոք տպագրված «Հայ քնար» (1907թ., Փարիզ) և «Հայ գեղջուկ երգեր» (1912թ., Լայպցիգ) ժողովածուները, պարբերական մամուլում տպագրված հատուկներ երգեր,² 1931թ. լույս տեսած «Ազգագրական ժողովածուն» Ապիրիդոն Մելիքյանի խմբագրությամբ, 1933թ. Կոմիտասի աշակերտ Վարդան Սարգսյանի խմբագրությամբ հրատարակված «Պատարագը»՝ արական կազմի համար (Փարիզ), «Տաղը և ալելույք Հայաստանեայց Առաքելական Աեկեղեցվոյ» տետրը (հրատարակված նույնպես Փարիզում 1938թ.), 1950թ. Մ. Աղայանի խմբագրությամբ տպագրված երկրորդ «Ազգագրական ժողովածուն»: Ասվել է

նաև, որ Կոմիտասի շատ ձեռագրեր և ուսումնասիրություններ առայժմ հայտնաբերված չեն:

Ռ.Աթայանը վերանայել է բոլոր հայտնի ժողովածուները, մանրամասն ուսումնասիրել Կոմիտասի համալրված արխիվի՝ առանձին թերթիկներ՝ Կոմիտասի «թղթերը» սևագրություններ, ծոցատետրեր, պատառիկներ:

Խմբագիրը վերծանել է դժվար ընթեռնելի սևագիր ձեռագրերը, երաժշտական նյութը ժողովել և տեղադրել ըստ ժամանակագրության և ժանրային-ոճական առանձնահատկությունների:

Աթայանի կենդանության օրոք (վախ. 1994թ.) հրատարակվեցին վեց հատոր, որոնցում զետեղված են Կոմիտասի աշխարհիկ ստեղծագործությունները: I հատոր-մեներգեր (1960թ.), երկրորդ՝ խմբերգեր (1965թ.), երրորդ՝ խմբերգեր (1969թ.), չորրորդ՝ խմբերգեր և մեներգեր (1976թ.), հինգերորդ՝ մեներգեր, զուգերգեր, եռերգ և խմբերգեր (1979թ.), վեցերորդ՝ դաշնամուրային ստեղծագործություններ (1982թ.):

Ռ. Աթայանի տքնաջան աշխատանքների շնորհիվ հավաքված և հրատարակության էին նախապատրաստված հաջորդ հատորների և երաժշտական նյութը, և ծանոթագրությունները:

Այդ հատորների համակարգված հրատարակման գործին ձեռնամուխ եղավ հնուտ երաժշտագետ Գևորգ Գյոդակյանը:

Իրար հաջորդեցին Յոթերորդ հատորը-«Պատարագ» (1997թ.), ութերորդը՝ հոգևոր ստեղծագործություններ (1998թ.), իններորդից-տասներեքերորդը (1999թ., 2000թ. և 2004 թվական) ուր զետեղված է Կոմիտասի երաժշտա-ազգագրական ժառանգությունը: Հրատարակության են պատրաստվում տասնչորսերորդ և տասնհինգերորդ հատորները⁴:

Տասնչորսերորդ հատորում ընդգրկվելու են հայ ժողովրդական և աշուղական երգեր ու նվագներ, տասնհինգերորդում՝ զուտ բանահյուսական, տեքստային նյութ:

Յուրաքանչյուր հատորի երաժշտական նյութին նախորդում են Ռ. Աթայանի գիտական ծավալուն նախաբանները, որոնք առանձին կարող են դիտարկվել որպես երաժշտագիտական լուրջ աշխատություններ: Ներածական բաժնում նկարագրվում և ներկայացվում է հատորում զետեղված երաժշտական նյութի ստեղծման, կենցաղավարման պայմաններն ու ժամանակագրությունը, գաղափարա-գեղարվեստական, տեքստային առանձնահատկությունները, համերգային կատարումներն ու ժամանակակիցների արձագանքները: Ռ. Աթայանը մասնագիտական քննության է ենթարկում Կոմիտասի մեներգերի (I հատոր), զուգերգերի, խմբերգերի (II, III, IV, V հատորներ), հոգևոր ստեղծագործությունների, ազգագրական գրառումների ծայնագրման, մշակման

ընթացքը, ներդաշնակման սկզբունքների ձևավորումը, հարմոնիկ և պոլիֆոնիկ ոճերի զարգացման ինքնատիպ ուղիները:

Հատորների նախաբաններով Ռոբերտ Աթայանը ցույց է տվել Կոմիտաս-կոմպոզիտորի ստեղծագործական ոճի բյուրեղացման ընթացքը խմբերգային մեծ կոմպոզիցիաներ կառուցելու սկզբունքները:

Ակադեմիական հրատարակության հատորներում բացի նախաբաններից, երաժշտա-տեսական, վերլուծական և տեղեկատվական առատ նյութ են պարունակում ծանոթագրությունները:

Հետազոտական այդպիսի մանրագնին աշխատանք, ինչպիսին արված է «Ծանոթագրություններ»-ում դժվար է հանդիպել Կոմիտասին նվիրված որևէ այլ աշխատությունում:

Ռ. Աթայանը վերծանում և վերլուծում է այն հսկայական երաժշտական նյութը, որ տարիների ընթացքում կենտրոնացել էր մեծ երաժշտի արխիվում⁵:

Ծանոթագրություններում խմբագիրը նշում է յուրաքանչյուր երգի բնագիրը, երբ և որտեղ է հրապարակված, սևագիր տարբերակները, համեմատում է բնագիրը սևագիր տարբերակների հետ⁶:

Յուրաքանչյուր մեներգի կամ խմբերգի վերաբերյալ Աթայանը տալիս է ամփոփ, վերլուծական տեղեկություններ, առանձնացնելով ակնհայտ և չնչին տարբերությունները: Հստակ, կոնկրետ նշում է, թե որ երգը որ հրապարակումներից կամ ձեռագիր տետրակներից են վերցված, Կոմիտասի կողմից ինչպիսի փոփոխությունների են ենթարկված:

Ժողովածուների «տարբերակներ» բաժնում խմբագիրը գետեղել է միևնույն երգի բոլոր առավել շահեկան նախնական տարբերակները, կարևորելով և ընդգրկելով յուրաքանչյուրը մանրամասն:

Ակադեմիական հրատարակությունն ընդգրկել է նաև Կոմիտասի դաշնամուրային և հոգևոր ստեղծագործությունները:

Դաշնամուրային երկերը (VI հատոր) Կոմիտասի ժառանգության հետաքրքիր բաժիններից է: Ինչպես մեներգերում և խմբերգերում, այնպես էլ պարեղանակների մշակումներում ևս կոմպոզիտորը ժողովրդական մեղեդիներին հաղորդել է գեղարվեստական նոր որակ և արտահայտչականություն:

Վեցերորդ հատորի նախաբանը և ծանոթությունները ներկայացնում են ազգային դաշնամուրային երաժշտության կոմիտասյան բարձրաժողով և ինքնատիպ այս նմուշների ստեղծման առաջին կատարումների և հաջողությունների հրատարակությունների պատմությունը: Ծանոթագրությունների վերլուծությունների և եզրահանգումների հիմքը խմբագրի համար եղել է և Կոմիտասի ուսումնասիրությունները⁷, և սեփական, մանրագնին հետազոտությունները:

Ազգային երաժշտամտածողությունից⁸ բխած դաշնամուրային պարերում, ըստ Աթայանի «հեղինակը (Կոմիտասը-ընդգծ. Լ.Ս.) երևան է բերել դաշնամուրը յուրատեսակ հնչեցնելու մի առանձնահատուկ վարպետություն»⁹:

Կոմիտասի երաժշտական ժառանգության մեջ կարևոր տեղ են գրավում հոգևոր եղանակների ծայնագրություններն ու մշակումները:

Ռ. Աթայանի ներհուն աշխատանքների շնորհիվ Կոմիտասի այս ոլորտը նոր, ամբողջական բացահայտում է ստանում:

Յոթերորդ հատորում զետեղված է արական կազմի համար գրված «Պատարագը» իր պարբերականներով և հայտնի հրատարակություններով¹⁰:

Ութերորդ հատորը ընդգրկում է Կոմիտասի ներդաշնակած հոգևոր խմբերգերը, էմի Աբգարի «Պատարագի» մեղեդիների հիման վրա բազմաձայնած հատվածներ «Պատարագ»-ից շարականներ, սաղմոսներ, երգեր, հոգևոր երգասագություններ, եղանակներ, տաղեր:

Չատորի մեջ ընդգրկված շատ ստեղծագործություններ հրապարակվել են առաջին անգամ:

Ռ. Աթայանը, ապացուցեց Կոմիտասի մեծածավալ ստեղծագործության «Պատարագի» իր կողմից ավարտուն երկ լինելու փաստը¹¹: Երևելի խմբագիրը ըստ արժանվույն լուսաբանեց և զնահատեց «Պատարագի» գեղարվեստական-գաղափարական արժանիքները, կոմպոզիցիոն առանձնահատկությունները: Ըստ Աթայանի համերգային կատարման համար նախատեսված Կոմիտասի «Պատարագը» հայկական հոգևոր երաժշտության բարձրարժեք նմուշներից է, կոմիտասյան բազմաձայնության ամենավառ ու բնորոշ օրինակը: Բազմաձայնություն, որը կառուցված է ժողովրդական մեղեդային ինտոնացիաների և լադային յուրատիպ հնչողության վրա:

Հիմնվելով բացառապես հեղինակային ձեռագրերի վրա Ռ. Աթայանը հսկայածավալ աշխատանք էր կատարել «Պատարագի» և Կոմիտասի հոգևոր մյուս ստեղծագործությունների հրապարակման գործում:

Այդ ազգանվեր գործը գիտական պատասխանատվությամբ շարունակեց Գ. Գյոդակյանը¹²: Նա Ռ. Աթայանի պատրաստած ողջ նյութը խմբավորեց և տեղադրեց Յոթերորդ, Ութերորդ և հաջորդ հատորներում¹³: Ինչպես ասված է Ութերորդ հատորի նախաբանում «Իրենց գեղարվեստական մշանակությամբ այս գործերը դուրս են գալիս հայ իրականության սահմաններից և կարող են դասվել տվյալ ժամանակաշրջանի համաքրիստոնեական երաժշտական մշակույթի խոշորագույն երևույթների շարքը»¹⁴:

Չայ երաժշտական մշակույթի անգնահատելի հարստությունն է Կոմիտասի ազգագրական ժառանգությունը: Ռ. Աթայանի հետազոտություններից տեղեկանում ենք ոչ միայն Կոմիտասի գիտա-հետազոտական և համերգային գործունեության, այլ նաև երաժշտա-բանահավաքչական ժառան-

գության անհայտ և արժեքավոր հատվածի մասին: Այդ հատվածը ընդգրկում է Կոմիտասի երաժշտական-ազգագրական ժառանգությունը, որը մինչև Ակադեմիական հրատարակություն հայտնի էր չուրջ չորս հարյուր երգերով:

Ռ. Աթայանի աշխատանքների շնորհիվ այդ թիվը հասավ հազար ութ հարյուրի:

Իններորդ հատորի նախաբանում Աթայանը ներկայացնում է Կոմիտասի բանահավաքչական գործունեությունը և այն «գիտական մոտեցումները», որով «նա (Կոմիտասը-ընդգծ. Լ. Ս.) հայ ժողովրդական երաժշտության հավաքման գործը դրեց միանգամայն նոր՝ գիտական հիմքերի վրա»:

Հնարավոր ամբողջությամբ ներկայացնելով իր կողմից վերախմբավորված, համակարգված ազգագրական նյութը Ռ. Աթայանը մանրամասն կանգ է առել ժողովրդական երգերի կոմիտասյան գրանցման բանաստեղծական, մետրա-ռիթմային, մեղեդային, ծայնակարգային առանձնահատկությունների վրա:

Կոմիտասի ձեռագիր ժողովածուները,¹⁵ և տարանջատ «դաշտային» գրառումները (որոնք ամբողջության մեկ մասն են կազմել), Աթայանը խմբավորել է աշխատելով պահպանել ժամանակագրական հերթականությունը: Իններորդ հատորը ներկայացնում է վաղ շրջանի (1885-1896թթ.) գրառումները:

Տասերորդ հատորը կոչվում է «Ժանրային», ընդգրկելով 1899-1904թթ. (եւտ, բեռլինյան) գրառումները: Տասնեկերորդ հատորի հիմնական նյութը 1931թ. հրատարակված «Ազգագրական ժողովածուն» է՝ առավել ճշգրտված և լրացված¹⁶: Տասներկուերորդ հատորում զետեղված են «Ազգագրական ժողովածուի» առաջին հատորի հավելվածները և 1950թ. Ս. Աղայանի կազմած, Զ. Քուլճարյանի խմբագրած «Ազգագրական ժողովածու»-ի երկրորդ հատորի նյութը: Տասներեքերորդ հատորը կոչվում է «Զայնակարգային» հայկական նոտագրության բնագրերով և դրանց եվրոպական նոտագրության փոխադրումներով:

Ֆաքսիմիլեով հրատարակված այս ժողովածուն աչքի է ընկնում մետրա-ռիթմական առանձնահատկությունների ընդգծված յուրակերպությամբ:

Ազգագրական 12-րդ, 13-րդ ժողովածուներում ընդգրկված են նաև նախորդ հատորների երգերի առավել շահեկան տարբերակները: Հայ ժողովրդական և աշուղական երգեր, նվագներ, թուրքական, քրդական երգերն ու նվագները զետեղված են Կոմիտասի երկերի ժողովածուի տասնչորսերորդ հատորում:

«Ժողովրդական երգերի հավաքումն ու գրառումը կազմել է Կոմիտասի թրեւս ամենահիմնական երաժշտագիտական զբաղմունքը», - գրում է Ռ. Աթայանը¹⁷: Իրավամբ, ազգագրական բարձրարժեք գրառումները հիմնանյութ

են հանդիսացել Կոմիտասի գիտական հետազոտությունների և ստեղծագործական մշակումների համար:

Գիտական տքնաջան աշխատանքի շնորհիվ Ռ. Աթայանը ոչ միայն ներկայացրել է Կոմիտասի երաժշտա-ազգագրական ամբողջական ժառանգությունը, այլև մշակել վերլուծական սեփական սկզբունքներ:

Ժողովրդա-մեղեդիական ոճի հիմքը, ըստ Ռ. Աթայանի, և իրավամբ կազմում են ժողովրդական լադերը:

Ազգագրական որոշ գրառումներում, խմբագիրը հատկապես է շեշտել այդ լադերի առանձնահատկությունները:

«ԲԶ-ի ծայնակարգը կլիմտային օժանդակ հենակետով-գրում է Ռ. Աթայանը,-հայ մոնոդիկ երաժշտության հնագույն երևույթներից է, հոգևոր երգերում չի հանդիպում, պահպանվել է միայն գյուղական երաժշտության մեջ, տարածվել նաև ոճով դրան մոտ աշուղական երգերում»¹⁸:

Գ) Լուսաբանելով Կոմիտասի երգերում ծայնեղանակների խնդիրը խմբագիրը, նախ հիմնավորում է հայ հոգևոր և ժողովրդական երաժշտության ծայնակարգերի նույնության կոմիտասյան տեսակետը «Քառյակների դրությամբ են հորինված և մեր թե՛ ժողովրդական, թե՛ եկեղեցական եղանակները, որոնք քույր-եղբայր են և նույն կազմությունն ունին»,¹⁹ այնուհետև ցույց է տալիս այդ ծայնակարգերի վրա կառուցվող «մեղեդիակերտման» նմուշներ: Զայնակարգերի խնդրում, մեր կարծիքով, Ռ. Աթայանը համգում է այն եզրակացության, թե Կոմիտասը իր քաջատեղյակությամբ «ուժայն» համակարգից, օգտագործելով համակարգի ծայնանունները,²⁰ այդուհանդերձ, հիմնվել է սեփական տեսական զննումների վրա,²¹ «ծայնակարգի տոնայնական միասնացումներով» կառուցելով ազգագրական երգերի մեծ մասը:

Ըստ Աթայանի այդ «միասնացումները» օգնում են անմիջականորեն ցուցադրելու «երգերի ընդհանուր ելևէջային կառուցվածքի թե՛ ազգային ավանդականությունը, և թե՛ դրա բազմազանությունը»²²:

Ավելացնենք նաև, որ կոմիտասյան «ծայնակարգային տոնայնական միասնացումները» պոլիմետրիկ և պոլիռիթմիկ զուգակցումների հետ մեկտեղ, դարձել են կոմպոզիտորի պոլիֆոնիկ հյուսվածքի կարևոր գործոններից մեկը:

Կոմիտասի ազգագրական նյութի վերլուծության աթայանական կարևոր սկզբունքներից է նաև.

դ) բանաստեղծական տեքստի, բարբառների, բանախոսական աղբյուրների, դրանց ժամանակագրության ուսումնասիրության խնդիրը:

Խոսքի և մեղեդու շեշտադրության կապի և փոխազդեցության առանձնահատկությունները²³ Աթայանը ներկայացնում է մեներգերում, խմբերգերում, հոգևոր ստեղծագործություններում: Ազգագրական երգերի բառային-բարբառային կողմի ճշգրտումը խմբագիրն հնարավորություն է ընձեռում

հստակեցնելու ոչ միայն երգի ժանրը ու բնույթը, այլև կատարման եղանակը²⁴։ «Ակնա երգերում» խմբագիրը մանրամասն կանգ է առնում «հայերեն»-ի կազմության և նշանակության վրա, դրանով իսկ հաստատելով «Ակնա ժողովրդական երգերի» կապը միջնադարյան գուսանական երաժշտության հետ «Հայերենի հիման վրա է ձևավորվել հայ միջնադարյան գուսանների քնարական երգի հիմնական տեսակը»²⁵։ Վիպական ու պատմական երգերը Աթայանը հարստացրել է «Սասնա ծռեր» վեպի երգային հատվածներով։ Կատակի, երգիծանքի, մանկական խաղերգերով ու պարերգերի բազմապիսի նմուշներով Ռ. Աթայանը ամբողջացրել է Կոմիտասի ստեղծագործությունների ժանրային-թեմատիկ պատկերը։ Ժանրերի ընդգրկման մեջ կարևոր պատկեր են ներկայացնում լրացված, հարստացված Շինական և Ծխային երգերը։

Կոմիտասի ազգագրական գրառումների ինքնատիպ ոճական շերտերում խմբագրին հետաքրքրել է զ/ մետրա-ռիթմիկայի խնդիրը։ Այս խնդրին ժամանակին անդրադարձել է դեռ Կոմիտասը իր ուսումնասիրություններում, քննարկելով ոչ միայն երգերի տեսակները (ժանրերը-ընդգծ. Լ.Ս.) ու ծայնակարգը, այլև «ամանակներն ու տրոհակները»²⁶։

Մետրի գրանցման, մեղեդիների տակտավորման կոմիտասյան սկզբունքները Ռ.Աթայանը քննարկում է «ժողովրդական շեշտադրության տրամաբանության»²⁷ ժողովրդական երգի ազգային-ոճական առանձնահատկությունների միշտ կիրառման հիմքով։

Հայ երաժշտարվեստի, կոմիտասագիտության զարգացման համար երկերի համահավաք հրատարակումը ունի գեղարվեստական, գիտական, պատմական հսկայական նշանակություն։

Ազգային երաժշտության դասական Կոմիտասի ստեղծագործության միջոցով ներկայանում է հայ մշակույթը իր հնարավոր ամբողջության մեջ։

Որքան կարևոր է Կոմիտասի ժառանգության հրատարակումը, նույնքան և կարևոր է դրա գիտական իմաստավորումը, որն իրագործեց կոմիտասագետ Ռոբերտ Աթայանը։

Տեղին ենք համարում մեք բերել կոմպոզիտոր Տիգրան Մանսուրյանի Կոմիտասին տրված գնահատականը.

«Հրաշք է, որ մի ժողովրդի երաժշտական մտածողության դարավոր կուտակումը դառնա մեկ մարդու քննության նյութ, դառնա նրան հասանելի իր բոլոր գաղտնիքներով, թոթուներով, խաղ ու հմայքով։ Եվ նամանավանդ իր օրենքներով»²⁸։

Այս հրաշքի առավել լիարժեք բացահայտմանը մեծապես նպաստեց Ռոբերտ Աթայանի խմբագրական կոչվող ծավալուն, մեծարժեք հետազոտությունը, որն այսօր ներկայանում է Կոմիտասի ժառանգության ակադեմիական

հրատարակության հատորներով: Եվ որն շարունակվում է, նույնպես վաստակաշատ երաժշտագետ Գևորգ Գյոդակյանի արժանի մասնակցությամբ:

Ծանոթագրություններ

¹ Տես, երկերի ժողովածուի առաջին հատորը:

² «Կաբալի երգը»-«Հասկեր» ամսագիր, Թիֆլիս, 1908թ., «Զեմ կրնա» պարերգ, «Գեղարվեստ» ամսագիր, Թիֆլիս, 1908թ., «Շողեր»-«Սուզիկա»-ամսագիր, Պոլիս, 1912թ., «Ախ, մարուլ ջան -«Գեղունի» ամսագիր», Վենետիկ, 1901թ., «Տեր ողորմյա»-«Ամենայն տարեցույց», Կ. Պոլիս, 1914թ., «Երի երի ջան»-«Ամենուն տարեցույց», Կ. Պոլիս, 1915թ.

³ Կոմիտասի երևանյան արխիվը համալրվել է 1946, 1952 և 1955թվականներին:

⁴ Այս հատորների խմբագրական աշխատանքներում Գ. Գյոդակյանի հետ մեկտեղ ակտիվ մասնակցություն է ցուցաբերում երաժշտագետ, ֆուլկլորիստ Ա. Փախլանյանը:

⁵ Երևանի Է. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարան:

⁶ Տարբերակային համեմատություններ արվում են նաև ազգագրական գրառումներում:

⁷ Կոմիտաս-Հոգվածներ և ուսումնասիրություններ, Պետ. հրատ., Երևան, 1941թ., էջ 52:

⁸ Ազգային լադերից բխած կվարտային համահնչյունները, ժողովրդական գործիչների (դափ, թառ) նմանակումը:

⁹ Երկերի ժողովածու-Վեցերորդ հատոր «Սովետական գրող», Երևան, 1982թ., էջ 14:

¹⁰ Երկերի ժողովածու, հատոր 7-րդ, Նախաբանի և Ծանոթագրությունների հոդվածները: «Անահիտ» հրատ., Երևան, 1997թ.:

¹¹ 1933թ. Փարիզում Կոմիտասի աշակերտ Վարդան Սարգսյանի վերականգնած և խմբագրած «Պատարագը» լիարժեք երկ չէր:

¹² 7-րդ, 8-րդ հատորների հրատարակման գործին մասնակցել է երաժշտագետ Ռ. Դերոյանը:

¹³ Հրապարակված են տասներեք հատոր:

¹⁴ Երկերի ժողովածու, հատոր 8-րդ, ԳԱ «Գիտություն», հրատ. Երևան, 1998թ., էջ 7:

¹⁵ Այդ ժողովածուները տասն են:

¹⁶ Սկզբնական 255 երգի փոխարեն հավելվածներով շուրջ 505 երգ:

¹⁷ Երկերի ժողովածու, հատոր 9-րդ, էջ 13:

¹⁸ Եժ., հ. 9-րդ, «Հողելլո ջան» երգի ծանոթագրությունը, էջ 141:

¹⁹ Կոմիտաս-հոգվածներ և ուսումն., Պետ. հրատ., Երևան, 1941թ., էջ 139:

²⁰ «Ավնա ժողովրդական երգերում», Եժ, հ. 9, էջ 91:

²¹ Կոմիտաս-հոգվածներ և ուսումն., Պետ. հրատ., Երևան, 1941թ., էջ 105-106:

²² Երկերի ժողովածու, հրատ. 9-րդ, էջ 26:

²³ Այդ առումով հետաքրքրական նյութ է պարունակում Եժ. 13-րդ հատորը:

²⁴ 1904-1905թթ. Կոմիտասը և Մանուկ Աբեղյանը հրատարակել են «Հազար ու մի խաղ» ժողովածուները (100 երգային տեսքեր): Հայտնի է, որ Կոմիտասը օժտված էր բանաստեղծական ծիրքով: «Սիրե բնությունը» ջնարական բնույթի արծակ բանաստեղծությունը տպվել է «Եգիպտահայ տարեցույց ամսագրում, Ալեքսանդրիա, 1926թ., էջ 163»:

²⁵ Եժ. Հ. 9-րդ, էջ 169:

²⁶ Կոմիտաս-հոգ. և ուսում., պետ. հրատ., Երևան, 1941թ., էջ 31-81:

²⁷ Երկերի ժողովածու, հ. 9-րդ, էջ 19:

²⁸ Տիգրան Մանուկյան-«Կոմիտասը Մեծ Վերանորոգիչ», «Գրական թերթ», 5/X-1969թ.: